# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք ք. Բյուրեղավան
Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 դեկտեմբերի 2019թ. N 483 Ա

### ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՅԳԵՏՆԱԿԸ, ԶՈՒԳԱՐԱՆԸ, ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ, ՀԵՆԱՊԱՏՆ ՈՒ ՊԱՐԻՍՊԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-13-րդ և 22.1-րդ կետերի, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ և 55-րդ կետերի, 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշման, հաշվի առնելով, որ այգետնակի կիսանկուղը, պարիսպն ու հենապատը կառուցված են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, այգետնակը, զուգարանը, աստիճանները, հենապատն ու պարիսպը կառուցված չեն ու չեն գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ և հիմք ընդունելով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից 2018 թվականի օգոստոսի 08-ին տրված N Հ-15069 արխիվային տեղեկանքը, շինարարական կոնստրուկցիաների տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունն ու Լիանա Սերյոժայի Առաքելյանի դիմումը՝ որոշում եմ.

1. Աբովյանի շրջանի Նոռնոս այգետարածքի թիվ 17 տնամասի թիվ 12 հասցեում գտնվող անշարժ գույքը վերահասցեավորել.

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նոռնոս Չալյանի թաղամաս 11 փողոց 12:

2.Լիանա Սերյոժայի Առաքելյանին (ծնված՝ 1959 թվականի հունվարի 01-ին) սեփականության

իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Դարանի թաղամաս 11 փողոց 12 (ծածկագիր՝ 07-051-0141-0015) հասցեի 0.04754 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված բնակելի նպատակային նշանակության 130.88 քմ արտաքին (106.85 քմ ներքին) մակերեսով այգետնակը, ընդհանուր 11.41 քմ արտաքին (11.31 քմ ներքին) մակերեսով զուգարանը, աստիճանները հենապատն ու պարիսպը ճանաչել օրինական:

3.Լյուսա Սերյոժայի Առաքելյանին՝ համայնքապետարանի 900105202213 հաշվեհամարին վճարել 72182 (յոթանասուներկու հազար մեկ հարյուր ութսուներկու) դրամ՝ 65.62 քմ արտաքին մակերեսով 2019 թվականին կառուցված այգետնակի ձեղնահարկի համար, 1491.6 (մեկ հազար չորս հարյուր իննսունմեկ ամբողջ վեց տասնորդական) դրամ՝ ընդհանուր 2.26 քմ արտաքին մակերեսով 2003 թվականին կառուցված զուգարանի և աստիճանների օրինականացման վճար: Ընդամենը 73673.6 (յոթանասուներեք հազար վեց հարյուր յոթանասուներեք ամբողջ վեց տասնորդական) դրամ:

4.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60 օրյա ժամկետում Բյուրեղավանի համայնքապետարանի համապատասխան հաշվեհամարին չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5.Հաստատել սույն որոշման անբաժանելի մաս կազմող «ԴԻՄ ԱՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տված ընդհանուր 0.04754 հեկտար մակերեսով վերոնշյալ հողամասի ու շինությունների հատակագիծը:

6.Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանում՝ պետական գրանցում կատարելու համար:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ԲԱՂԴԱՍՅԱՆ

2019թ. դեկտեմբերի 02
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք ք. Բյուրեղավան
Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

02 դեկտեմբերի 2019թ. N 484 Ա

### ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԲԱՑՎԱԾ, ՓԱԿՎԱԾ ԵՎ ՁԵՎԱՓՈԽՎԱԾ ԴՌՆԵՐՆ ՈՒ ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-13-րդ կետերի, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ և 55-րդ կետերի և 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշման. հաշվի առնելով, որ այգետնակը, ծածկը, օժանդակ շինությունները, ցանկապատը, դարպասը և մասամբ կառուցված չեն և չեն գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սպառնալիք և հիմք ընդունելով շինարարական կոնստրուկցիաների տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը, N 18042019-07-0008 սեփականության վկայականն ու Տիգրան Անդրանիկի Հարությունյանի դիմումը` որոշում եմ.

1.Մարզ Կոտայք համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Այգեգործական զանգված 48 հասցեում գտնվող անշարժ գույքը վերահասցեավորել.

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Գարուն թաղամաս 2-րդ փողոց 48:

2. Տիգրան Անդրանիկի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Գարուն թաղամաս 2-րդ փողոց 48 (ծածկագիրը` 07-051-0110-0010, օրինական կառուցված շինությունները` 137.21 քմ)

հասցեի բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման 0.063 հեկտար մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված բնակելի նպատակային նշանակության 92.54 քմ արտաքին (85.8 քմ ներքին) մակերեսով այգետնակի կիսանկուղը, ընդհանուր 141.5 քմ արտաքին (29.56 քմ ներքին) մակերեսով ծածկը, օժանդակ շինությունները (62.32 քմ ներքին մակերեսով), ջրավազանը (10.0 քմ ներքին մակերեսով), զուգարանը (4.38 քմ ներքին մակերեսով), մառանը (12.64 քմ ներքին մակերեսով), ինքնակամ բացված, փակված, ձևափոխված թվով 9 դռներն ու պատուհանները և ներքին միջնապատերի ձևափոխությունները ճանաչել օրինական:

3.Տիգրան Անդրանիկի Հարությունյանին՝ համայնքապետարանի 900105202213 հաշվեհամարին վճարել 101794 (մեկ հարյուր մեկ հազար յոթ հարյուր իննսունչորս) դրամ՝ 92.54քմ արտաքին մակերեսով այգետնակի կիսանկուղի օրինականացման վճար, 93390 (իննսուներեք հազար երեք հարյուր իննսուն) դրամ՝ ընդհանուր 141.5 քմ արտաքին մակերեսով ծածկի, օժանդակ շինությունների, ջրավազանի, զուգարանի և մառանի օրինականացման վճար և 9900 (ինը հազար ինը հարյուր) դրամ՝ բացված, փակված, ձևափոխված թվով 9 դռների ու պատուհանների օրինականացման վճար: Ընդամենը 205084 (երկու հարյուր հինգ հազար ութսունչորս) դրամ:

4.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60 օրյա ժամկետում Բյուրեղավանի համայնքապետարանի համապատասխան հաշվեհամարին չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5. Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ պետական գրանցում կատարելու համար:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2019թ. դեկտեմբերի 02
ք. Բյուրեղավան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք ք. Բյուրեղավան
Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 դեկտեմբերի 2019թ. N 485-Ա

### ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՔԱՂԱՔ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 33/107 ՀԱՍՑԵԻ ԳՈՒՅՔՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի, Հողային օրենսգրքի 57-րդ հոդվածի 1.1-րդ մասի և 66-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի, 2006 թվականի մայիսի 18-ի №912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34-րդ, 34.2-րդ և 36-րդ կետերի, 35-րդ կետի «դ» և «ե» ենթակետերի ու հիմք ընդունելով Բյուրեղավան համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 27-ի N 63-Ա որոշումն ու Նաիրա Սուրիկի Ազրեսյանի դիմումը՝ որոշում եմ.

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող (վկայական N 25102019-07-0086, գաղտնաբառ՝ AJ3U9XIZNLAZ) քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց թիվ 33/107 հասցեում գտնվող 38.6 քմ ներքին (42.4 քմ արտաքին) մակերեսով բնակելի նպատակային նշանակությամբ (գործառնական նշանակությունը՝ ավտոտնակ) ավտոտնակը 89040 (ութսունինն հազար քառասուն) դրամով և դրա զբաղեցրած 0.00424 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակությամբ (ծածկագիր 07-003-0037-0164) հողամասը 124656 (մեկ հարյուր քսանչորս հազար վեց հարյուր հիսունվեց) դրամով - ուղղակի վաճառքի ձևով օտարել կառույցն ինքնակամ իրականացրած Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Զորավար Անդրանիկի փողոց 33 շենքի 43 բնակարանի բնակիչ Նաիրա Սուրիկի Ազրեսյանին:

2.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված ընդհանուր 213696 (երկու

հարյուր տասներեք հազար վեց հարյուր իննսունվեց) դրամ վճարները 30-օրյա ժամկետում չվճարման դեպքում 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել գրավոր առաջարկություն անշարժ գույքը վարձակալելու վերաբերյալ: Վարձակալության իրավունքից հրաժարվելու դեպքում անշարժ գույքը տնօրինել 2006 թվականի մայիսի 18-ի №912-Ն որոշմամբ հաստատված կարգի 37-րդ կետով սահմանված կարգով:

3.Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Նառա Սուրիկի Ապրեսյանի կողմից:

4.Հանձնարարել Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Դանիել Ավագի Դանիելյանին (նույնականացման քարտ՝ 008117145, տրված՝ 2016 թվականի սեպտեմբերի 24-ին 059-ի կողմից, ծնված՝ 1987թվականի հունվարի 07 ին)՝ կատարել Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող Բյուրեղավան քաղաքի Զորավար Անդրանիկի փողոց թիվ 33/107 հասցեում գտնվող անշարժ գույքը Նառա Սուրիկի Ապրեսյանին ուղղակի վաճառքի ձևով օտարելու հետ կապված գործարքներ և կնքել պայմանագիր:

5.Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ պետական գրանցում կատարելու համար:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2019թ. դեկտեմբերի 02
ք. Բյուրեղավան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք ք. Բյուրեղավան
Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 դեկտեմբերի 2019թ. N 486 Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ և 55-րդ կետերի՝ որոշում եմ.

1.Կոտայքի մարզ քաղաք Բյուրեղավան Լևոն Մակարյան փողոց քաղաքապետարանի թիվ 1 վարչական շենքի և հողամասի (վկայական 2288349, տրված 2009 թվականի հուլիսի 29-ին) հասցեն համարել չեղյալ և վերահասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք:

2.Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերահասցեավորման գրանցում կատարելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ԲԺՇԿՅԱՆ

2019թ. դեկտեմբերի 02
ք. Բյուրեղավան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք ք. Բյուրեղավան
Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 դեկտեմբերի 2019թ. N 487-Ա

## ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐ (ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ) ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և հիմք ընդունելով Բյուրեղավան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 14-ի N 15-Ն որոշմամբ հաստատված կարգը՝ որոշում եմ.

1. 2019 թվականի դեկտեմբերի 02-ից մինչև 18-ը ներառյալ Բյուրեղավանի համայնքի բոլոր բնակավայրերում կազմակերպել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2020 թվականի տարեկան աշխատանքային պլանի և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2020 թվականի բյուջեի նախագծերի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավանի քաղաքային համայնքի «Մարզամշակութային կենտրոն» բյուջետային հիմնարկի ծառայությունից (շախմատի ուսուցում) օգտվողների համար՝ համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափի վերաբերյալ հանրային քննարկումներ:

2. Լսումները (քննարկումները) անցկացնել՝

1) 2019 թվականի դեկտեմբերի 17-ին, ժամը 13:00-ին Բյուրեղավան բնակավայրում Մշակույթի տան շենքում, հասցեն՝ քաղաք Բյուրեղավան, Զորավար Անդրանիկի փողոց,

2) 2019 թվականի դեկտեմբերի 18-ին, ժամը 12:00-ին Նուռնուս բնակավայրում վարչական ղեկավարի նստավայրում, հասցեն՝ գյուղ Նուռնուս, գլխավոր փողոց թիվ 15 վարչական շենք,

3) 2019 թվականի դեկտեմբերի 18-ին, ժամը 14:00-ին Ջրաբեր բնակավայրում վարչական ղեկավարի նստավայրում, հասցեն՝ գյուղ Ջրաբեր, 1-ին փողոց թիվ 13 վարչական շենք:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2019թ. դեկտեմբերի 02
ք. Բյուրեղավան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 դեկտեմբերի 2019թ. N 488-Ա

### ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի №596-Ն որոշման N1 հավելվածով հաստատված կարգի 9-րդ կետի և հիմք ընդունելով Բյուրեղավան համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանի հայտը՝ որոշում եմ.

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքին տալ նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք)՝ իրեն սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 (ծածկագիր՝ 07-003-0034-0010, վկայական 2288349) հասցեի վարչական շենքի 1-ին հարկում քաղաքացիների սպասարկման գրասենյակ վերակառուցելու նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2019թ. դեկտեմբերի 02
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք ք. Բյուրեղավան
Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 դեկտեմբերի 2019թ. N 489-Ա

## ՈՒԺԵՂ ԵՐԿՐԱՇԱՐԺԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 10-ի N 919-Ն որոշման 7-րդ կետը՝ որոշում եմ.

1.Հաստատել ուժեղ երկրաշարժերի դեպքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի բնակչության պաշտպանության կազմակերպման գործողությունների պլանը՝ համաձայն հավելված N 1-ի:

2.Հաստատել ուժեղ երկրաշարժերի դեպքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի բնակչության պաշտպանության կազմակերպման գործողությունների պլանի կատարումն ապահովող հետևյալ փաստաթղթերը՝

1)ուժեղ երկրաշարժերի դեպքում Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի բնակչության պաշտպանության միջոցների կառավարման սխեման՝ համաձայն հավելված N 2-ի.

2)ուժեղ երկրաշարժերի դեպքում բժշկական ապահովման ուժերի հաշվարկը՝ համաձայն հավելված N 3-ի.

3)7 բալ ուժեղ երկրաշարժերի դեպքում Բյուրեղավան համայնքին հասցված վնասների, փրկարարական և վթարավերականգնողական ուժերի ու միջոցների հաշվարկը՝ համաձայն հավելված N 4-ի.

4) ուժեղ երկրաշարժերի դեպքում Բյուրեղավան համայնքի տարահանված բնակչության վրանային

ավանի համար առաջին անհրաժեշտության ապրանքներով ապահովման հաշվարկը՝ համաձայն հավելված N 5-ի.

5)ուժեղ երկրաշարժերի դեպքում Բյուրեղավան համայնքի տարահանված բնակչության և քաղաքացիական պաշտպանության կազմավորումների անձնակազմի սննդամթերքով ապահովման հաշվարկը՝ համաձայն հավելված N 6-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2019թ. դեկտեմբերի 02

ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք ք. Բյուրեղավան
Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 դեկտեմբերի 2019թ. N 490-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 12-ի N 61-Ն որոշմամբ հաստատված հավելված N1-ի և հիմք ընդունելով տեղական վճարների դրույքաչափի նվազեցման արտոնություն կիրառելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 03-ի N 15 արձանագրությունը՝ որոշում եմ.

1.2019 թվականի համար Բյուրեղավանի «Արև» մանկապարտեզ նախադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպությունում մատուցված ծառայության դիմաց Կարինե Սարգսի Ավագյանի (ծնված՝ 2015 թվականի նոյեմբերի 17-ին) համար փոխհատուցման գումարի նկատմամբ կիրառել 50%-ի չափով նվազեցման արտոնություն՝ սկսած 2019 թվականի դեկտեմբերի 01-ից:

2.Բյուրեղավանի «Արև» մանկապարտեզ նախադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝

1) ապահովել կիրառված արտոնության կատարումը,

2) արտոնությունից օգտվողի կարգավիճակի փոփոխման դեպքում եռօրյա ժամկետում տեղեկատվություն ներկայացնել համայնքապետարան:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2019թ. դեկտեմբերի 03
ք. Բյուրեղավան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք ք. Բյուրեղավան
Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 դեկտեմբերի 2019թ. N 491-Ա

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգի՝ հիմք ընդունելով Բյուրեղավան համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանի դիմումը՝ որոշում եմ.

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 (ծածկագիր՝ 07-003-0034-0010, վկայական 2288349) հասցեի վարչական շենքի 1-ին հարկում քաղաքացիների սպասարկման գրասենյակ վերակառուցելու նպատակով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքին տալ շինարարության թույլտվություն՝ համաձայն հաստատված նախագծի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2019թ. դեկտեմբերի 03
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք ք. Բյուրեղավան
Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 դեկտեմբերի 2019թ. N 492-Ա

### ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ և 55-րդ կետերի, հիմք ընդունելով «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպության 2017 թվականի ապրիլի 21-ին տված N Հ 4184 Արխիվային տեղեկանքն ու Գուլշիդ Սերգեյի Զարգարյանի լիազորած անձ Միտյա Վլադիմիրովիչ Բաբախանովի դիմումը՝ որոշում եմ.

1.Աբովյանի շրջանի Նուռնուսի այգետարածքի 4-րդ թաղամասի թիվ 32 հասցեի անշարժ գույքի հասցեն համարել չեղյալ և վերահասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Սևան թաղամաս 4-րդ փողոց 32:

2.Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերահասցեավորման գրանցում կատարելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2019թ. դեկտեմբերի 03
ք. Բյուրեղավան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք ք. Բյուրեղավան
Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 դեկտեմբերի 2019թ. N 493 Ա

### ՆԱՐԻՆԵ ՆԱԶԱՐՅԱՆ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45 րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով Նարինե Նազարյանի հայտը և վճարման անդորրագրերը՝ որոշում եմ.

1.Նարինե Նազարյան անհատ ձեռնարկատիրոջը (հարկ վճարողի հաշվառման համար՝ 43080452) տալ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն Բյուրեղավան համայնքի Ջրաբեր գյուղի 2-րդ փողոց 22 հասցեում գտնվող 20 քմ մակերեսով տարածքով առևտրի օբյեկտում՝ 2019 թվականի հուլիսի 01-ից մինչև դեկտեմբերի 31 ի համար:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2019թ. դեկտեմբերի 05
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ

(մարզը, համայնքը)

# ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

## (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

N 19 02 դեկտեմբերի 2019թ.

Օբյեկտ վարչական շենքի 1-ին հարկում քաղաքացիների սպասարկման գրասենյակ վերակառուցելու

(օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, ուժեղացում, վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն)

(համառոտ բնորոշումը, հզորությունը)

նախագծային փաստաթղթերի մշակման համար:

«Աշխատանքային նախագիծ», (II կատեգորիա),

(փուլայնության աստիճանը (կատեգորիան), նախագծման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 (ծածկագիր՝ 07-003-0034-0010) հասցեի վարչական շենքում

(մարզի, համայնքի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)

Կառուցապատող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքին (պետական ռեգիստր վկ. N42181995866, ծածկագիր 22185816)

(բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջադրանքի տրամադրման հիմքը սեփականության վկայական 2288349

(կառուցապատողի նախաձեռնությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված

հայտ,

կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթերը)

Առաջադրանքի գործողության ժամկետը

(N 1 հավելվածի 32-րդ կետին համապատասխան)

## ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

*(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող անփոփ սխեմայով՝ Մ 1:500)*

1. Հողամասը գտնվում է — Բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման տարածք.
   (հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)

2. (*) Հողամասի չափերը — ծածկագիր 07-003-0034-0010, 0.2011հա. հող, վարչական շենք զբաղեցրած ներքին մակերեսով 149.55քմ
   (հողամասի սահմանները՝ կոորդինատային նշահարմամբ, մակերեսը (հա))

3. Հողամասի առկա վիճակը — ազատ, հարթ, անբարեկարգ տարածք
   (ռելիեֆի բնութագիրը, շենքերի (այդ թվում՝ քանդման ենթակա) առկայությունը (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, բարեկարգումը և այլն)

4. (*) Տրանսպորտային պայմանները — համայնքային նշանակության ճանապարհ, Վազգեն Ա Վեհափառի փողոց
   (ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մոտեցումները և այլն)

5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ(ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր) — հարակից տարածքով անցնող ստորգետնյա մալուխ, ջրագիծ, կոյուղագիծ, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր, գազամատակարարման համակարգ
   (նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ ստորգետնյա)

6. (*) Կից հողամասեր — համայնքային սեփականության հող, ճանապարհ, (հարևաններ ծածկագրերով)
   (կից հողօգտագործումների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացվող սխեմայի)

7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ) ____________ -------- ____________

(հուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)

8. (*) Հատակագծային սահմանափակումներ _<u>նախագիծը մշակել համաձայն տրված առաջադրանքի</u>

(տեղանքում գործող պարտադրական, պահպանվող օբյեկտների, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)

## ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

*(առաջանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող [illegible] սխեմայով՝ Մ 1:500)*

9. Ճարտարապետահատակագծային պահանջներ

<u>ղեկավարվել ՀՀ գործող նորմերին համապատասխան, ըստ միջավայրի պայմանների, հաշվի առնել միջավայրի քաղաքաշինական առանձնահատկությունները, հատակագծային լուծումները ըստ պատվիրատուի առաջադրանքի.</u>

(ելնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից, ինչպես քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում՝ կազմավորված (կազմավորվող) քաղաքաշինական միջավայրի պայմաններից առաջադրվող պահանջներ ծավալների ձևավորման, սանդղակի, արտաքին դեմքի, պատմամշակութային հուշարձանների և գունային լուծումների վերաբերյալ)

9.1. (*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր) *<u>Սահմանվել փողոցի կառուցապատման գծով</u>*

9.2. (*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր) ____ ---- ____________

9.3. թույլատրելի բարձրությունը (մետր)

սահմանային հարկայնության բարձրությունը փոխադարձաբար շենքերի և շինությունների նախագծման դեպքում՝ ՀՀՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմերով սահմանված պահանջների պարտադիր (հատուկ հարկայնային մեթոդներ, սեյսմակայունության բարձրացման միջոցառումներ և այլն)

9.4. կառուցապատման խտության գործակիցը (կառույցի (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին) ____________________

9.5. կառուցապատման տոկոսը (կառուցապատվող (անցրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին տոկոսներով (%) ____________ % ____________

9.6. կանաչապատման տոկոսը (կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին տոկոսներով (%) ____________________

9.7. այլ պահանջներ __<u>տարածքում տեղադրել ինֆորմացիոն վահանակ</u>__________

10. Հողամասում գտնվող շենքերի ու շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը ____________ -------- ____________

11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները ____________ -------- ____________

12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ

Պահանջներ գործող ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ

*<u>համաձայնեցնել հույնվածր կազմակերպությունների հետ</u>*

12.1. (*) ջրամատակարարում, կոյուղի, տաք ջրի մատակարարում — Կցվում է «ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» փակ բաժնետիրական ընկերություն

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.2. (*) էլեկտրամատակարարում — Կցվում է «ՀԱՅԷԼԵԿՏՐԱՑԱՆՑ» ՓԲԸ «Կենտրոն» մասնաճյուղ, «Նաիրի» էլեկտրական ցանցեր

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.3. (*) գազամատակարարում — Կցվում է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Աբովյանի ԳԳՄ

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.4. (*) էլեկտրոնային հաղորդակցության մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը — Կցվում է ______

(համաձայն N 1 հավելվածի 57-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված նշանակության տվյալների)

12.5. թույլ հոսանքներ — ______

12.6. աղբահանություն — Կնքել համապատասխան պայմանագիր աղբահանություն կազմակերպող իրավասու կազմակերպության հետ

13. Տարածքի ինժեներական նախապատրաստում — «Բուրվեզային կանաչապատում և բարեկարգում» 2013 կազմակերպել ջրահեռացում

(ռելիեֆի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումներ)

14. Բարեկարգում — ապահովել հարակից տարածքի մաքրությունը, կանաչապատումը, բարեկարգումը

(անհրաժեշտ պահանջվող միջոցառումներ, կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր, ցանկապատում, լուսավորում և այլն)

15. Շինարարական նյութեր — Քար, երկաթբետոն, տուֆ, բազալտ, կապիտալ բարձր շար. մետաղ, ապակի, փայտ, ավազ, ցեմենտ և այլն ըստ համաձայնեցված նախագծի

(շինարարական նյութերի օգտագործման առաջարկություններ ճակատների, ծածկերի, արտաքին դռների, պատուհանների վերաբերյալ)

16. Պաշտպանական կառույցներ — շինարարության ընթացքում ցանկապատել տարածքը և տեղադրել անհրաժեշտ այլ պաշտպանական միջոցներ

(արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության միջոցառումներ)

17. Հակահրդեհային պահանջներ — ապահովել հակահրդեհային նորմատիվ պահանջները

(հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումներ)

18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ — ______

19. Շրջակա միջավայրի պահպանում — չիրականացնել վտանգավոր միջոցառումներ, որը կթողնի բացասական ազդեցություն շրջակա միջավայրի վրա, ըստ գործող նորմերի

(շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցություններից զերծ պահելու միջոցառումներ)

20. Շինարարության կազմակերպում — ճանապարհի երթևեկելի մասում չտեղադրել երթևեկությանը խոչընդոտող պայմաններ

(առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քաղաքային տնտեսության և տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ)

21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը — «Աշխատանքային նախագիծ», 12 (տասներկու) ամիս

(նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)

## ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ — Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի № 596-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծերի երաշխավորությունը՝ հղում կատարելով համապատասխան իրավական ակտին)

23. Միջանկյալ — ______

համաձայնեցում

(իրավասու մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շահագրգիռ մարմինների հետ էսքիզային նախագծի նախնական համաձայնեցում, նշվում է նաև ստացողանցի փոփոխման հնարավորությունը՝ N 1 հավելվածի 57-րդ կետով նախատեսված դեպքում)

24. Հասարակական քննարկումներ — ՀՀ կառավարության 1998 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 660 որոշման պահանջների համաձայն

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով)

25. Համաձայնեցումների կամ մասնագիտական եզրակացությունների ստացում — *նախագիծը համաձայնեցնել Բյուրեղավանի համայնքապետարանի հետ և ինժեներական ենթակառուցվածքի տեղափոխման անհրաժեշտության դեպքում պայմանների վերաբերյալ համաձայնություն ձեռք բերել տվյալ ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ՝ մինչև նախագծային աշխատանքների սկսելը*

(նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման՝ օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ)

26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում ______________________

27. Այլ պայմաններ ______________________

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Կ. Տ.

Դ. ԴԱՆԻԵԼՅԱՆ
հեռ. 0222 6 52 03

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ**
(ՀՀ մարզ, համայնք)

# ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

**N13 03 դեկտեմբերի 2019 թ.**

Տրված է կառուցապատող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքին (պետական ռեգիստր վկ. N 42181995866, ծածկագիր 22185816) ______________________-ին

(իրավաբանական անձի անվանումը, պետական գրանցման վկայականի համարը,

Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 (ծածկագիր՝ 07-003-0034-0010, վկայական 2288349) հասցեի վարչական շենքի 1-ին հարկում քաղաքացիների սպասարկման գրասենյակ ______________________

(ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հասցեն, հողամասի գտնվելու վայրը)

______________________ (II կատեգորիա) ______________________ օբյեկտի

(օբյեկտի անվանումը, ռիսկայնության աստիճանը (կատեգորիան), հակիրճ բնութագիրը, հիմնական ցուցանիշները)

______________ վերակառուցման ______________________

շինարարական աշխատանքների կատարման, այդ թվում (նոր կառուցման, վերակառուցման, վերականգնման, ուժեղացման և այլն) կառուցապատվող հողամասի զբաղվող հատվածի վրա նշված ոչ հիմնական կառույցների ______________ ---------------------- ______________ տեղադրման համար:

(նշվում են ոչ հիմնական կառույցների անվանումները)

1. Օբյեկտի նախագծային փաստաթղթերը՝

1) մշակվել են «Աշխատանքային նախագիծ», «ԶՈՀՐԱԲ ԷՆԴ ԲԱՈՒԵՐ ԱՐՔԻԹԵՔԹՍ» սահմանափակ

(նախագծային փաստաթղթերի փուլը, նախագծային աշխատանքների

պատասխանատվությամբ ընկերության (լիցենզիա՝ N 16506, տնօրեն՝ Զ. ԲԱՈՒԵՐ) ______________ կողմից.

(կապալառուի անվանումը, լիցենզիայի համարը)

2) ստացել է (են) ______ փորձագիտական դրական եզրակացությունը (եզրակացությունները)

______________________________________________

(նշել փորձաքննության տեսակը)

______________________________________________ կողմից

(նշել փորձաքննության մարմնի (մարմինների) անվանումը, լիցենզիայի համարը)

կամ

նախագիծը թողարկող պատասխանատու կապալառուի երաշխավորագիրը՝ ______________________ և,

(նշել նախագիծը թողարկող պատասխանատու կապալառուի երաշխավորության պայմանագրի համարը)

3) սահմանված կարգով համաձայնեցվել են իրավասու մարմնի, օրենքով սահմանված այլ շահագրգիռ մարմինների Բյուրեղավան համայնքի ______________________ հետ:

(նշել մարմինների անվանումները և համաձայնեցման ժամկետները)

2. Շինարարական աշխատանքներն իրականացնել 2 ամսվա ընթացքում

(նշել շինարարության նորմատիվային տևողությունը)

Ներառյալ ավարտական ակտի տրամադրման համար ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքի համար նախատեսվող ժամկետը:

2.1. Ապահովել օբյեկտի շահագործման թույլտվության ստացումը

[] ավարտական ակտի տրամադրումից---------------------- ամսվա ընթացքում

[] ավարտական ակտի տրամադրման օրը:

Ներառյալ ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքի համար նախատեսվող ժամկետը:

3. Շինարարության վարման մատյանը բաղկացած է 14 թերթից, կարված և

դրոշմակնքված է ______ Բյուրեղավանի համայնքապետարանի ______ կողմից:
(իրավասու մարմնի անվանումը)

4. Նախագծային փաստաթղթերը փոփոխվել են (լրացվում է N 1 հավելվածի 108-րդ կետով նախատեսված դեպքերում) ______ կողմից
(նախագծային աշխատանքների կատարողի անվանումը, լիցենզիայի համարը)

և սահմանված կարգով համաձայնեցվել իրավասու մարմնի ______ և այլ
(նշել իրավասու մարմնի անվանումը)
շահագրգիռ մարմինների ______ հետ:
(նշել օրենքով սահմանված համաձայնեցնող մարմինների անվանումները)

5. Հատուկ պայմաններ՝

1) կառուցապատողը, նախքան շինարարությունն սկսելը, ինչպես նաև դրա ընթացքում, պարտավոր է հասցվելիք վնասների փոխհատուցման համար համաձայնության գալ կառուցապատման հետևանքով վնասներ կրող սուբյեկտների հետ.

2) շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետներում կառուցապատումը չավարտելու դեպքում գործում են N 1 հավելվածի 123-126-րդ կետերով սահմանված պահանջները.

3) *(լրացվում է N 1 հավելվածի 84-րդ կետով սահմանված դեպքերում)* սույն թույլտվությունը տրվել է սահմանված կարգով հաստատված «Նախագիծ» փուլի հիման վրա, որին հաջորդող «Աշխատանքային փաստաթղթեր» փուլը պետք է ապահովի հաստատված փուլով ընդունված լուծումները և աշխատանքների իրականացման հաջորդականությունը
______
______ :
(նշվում են նախապատրաստական, հողային, շինմոնտաժային աշխատանքները և այլ աշխատանքներ)

6. *(լրացվում է N 1 հավելվածի 116-րդ կետով սահմանված դեպքերում)*
Հաշվի առնելով, որ կառուցվող օբյեկտի շինարարությունը հնարավոր չէ առանց զիջավոր հատակագծի վրա ______ համարների տակ նշված շենքի (շենքերի) և կամ շինության (շինությունների) ______ քանդման՝
(նշվում են ամբողջությամբ կամ մասամբ քանդման ենթակա օբյեկտները, դրանց հիմնական ցուցանիշները, ընդհանուր մակերեսը, հարկայնությունը, շինանյութը և այլն)

սեփականատիրոջը (օգտագործողին) ______ տրված սույն
(նշվում է պետական գրանցման վկայականի համարը)
թույլտվությունը նաև քանդման թույլտվություն է:
Օբյեկտի քանդման աշխատանքներն իրականացնել նախագծային փաստաթղթերով ամրագրված հաջորդականությամբ:

7. Այլ պայմաններ ______;
(նշվում են իրավական ակտերով և (կամ) պայմանագրով նախատեսված այլ պայմանները)

8. Կառուցապատողը շինարարական (քանդման, ապամոնտաժման) աշխատանքներն սկսելուց առնվազն 3 օր առաջ, համաձայն N 5 հավելվածի N 2-5 ձևի, տեղեկացնում է իրավասու մարմնին:

9. Թույլտվության հիման վրա ցանկացած շինարարական և զուգահեռ աշխատանք կարող է իրականացվել բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, նախագծային փաստաթղթերին և նորմատիվ-տեխնիկական պահանջներին համապատասխան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ______ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Կ. Տ. Դ. [illegible]
Հեռ. 022265205